

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳԱԼՍՏՅԱՆ

Հուշագրությունը, մենուարային գրականությունը, պամֆլետն ու ֆելիետոնը, ինչպես նաև ակնարկն իր բազում տարատեսակներով ավանդաբար համարվում են ակնարկային գրականություն: Սակայն այս ժանրերից յուրաքանչյուրը պատմական զարգացման ուրույն ուղի է անցել՝ որպես կանոն ընդլայնելով ժանրի սահմանները: Հուշագրությունը վավերագրական ժանրի տարատեսակներից է, որի արմատները հեռավոր անցյալում են: Դեռ հնագույն ժամանակներում եղել են զանազան հուշարձանային մակագրություններ, պատմական գրանցումներ, «որոնք նպատակ ունեին ամրացնել, սերունդներին հասցնել մարդկանց հիշողությունը իրենց մասին, այս կամ այն նշանավոր դեպքի մասին»<sup>1</sup>:

Այսպիսի ընդհանուր բնորոշումը պայմանավորված է նրանով, որ անտիկ շրջանում հիմնականում զարգանում էին (երբ պատմագրությունը վերածվել էր արդեն առանձին ճյուղի) հուշագրության առաջին նմուշները (կենսագրություններ, նամակներ, պատմություններ): Ավելին, վաղ շրջանի գրեթե բոլոր ստեղծագործողների երկերում «անձնական հիշողությունների»՝ որպես պատմական վկայությունների, օգտագործումը դառնում է տարածված երևույթ (Քսենոֆոն, Կեսար, Եղիշե, Խորենացի, Փարպեցի)<sup>2</sup>: Հասկանալի է, որ այդ երկերում գերակշռում էր ճանաչողական, ինֆորմացիոն տարրը, սակայն նկատելի էին նաև որոշակի գեղարվեստական-գեղագիտական միտումներ, որոնք աստիճանաբար դուրս էին մղում դեպքերի պարզագույն շարադրանքը, տարեգրությունը: Հուշագրական բոլոր տիպի ստեղծագործություններն ընթերցողի համար հետաքրքիր են ոչ միայն տվյալ հեղինակի անձնական ապրումների, մանրամասների տեսանկյունից, այլև (երբեմն հենց առաջին հերթին) ժամանակի իրադարձությունների, նշանավոր դեպքերի և անձանց մասին պարունակած տեղեկություններով: Հենց այս հանգամանքն է նկատի ունեցել Գերցենը, որը Բ. Չելլինիի մենուարների մասին գրել է. «Բ. Չելլինիի մենուարները հետաքրքիր են ոչ թե այն պատճառով, որ նա խոշոր արվեստագետ էր, այլ, որ նա շոշափում է վերին աստիճանի հետաքրքիր հարցեր»<sup>3</sup>:

Համաշխարհային և հայ գրականության բազում օրինակներից երևում է (Գյոթե, Յայնե, Գերցեն, Տոլստոյ, Դոստոևսկի, Աղայան, Պոռոջյան, Շիրվանզադե, Օտյան), որ այս ժանրի ստեղծագործությունները ժամանակաշրջանի իրական հայելին են՝ տարբեր կողմերից ներկայացնելով դարաշրջանը և ժամանակակիցներին: Իհարկե, ասվածից չպետք է եզրա-

<sup>1</sup> **Հ. Մարգունի**, Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, Եր., 1973, էջ 473-474:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 474:

<sup>3</sup> **Герцен А. И.** Собрание соч., т. 8. М., 1956, с. 205.

կացնել, թե հուշագրություններում բացակայում են հեղինակի ներաշխարհը, շարադրանքի քնարականությունը:

Հայ գրականության մեջ նույնպես հուշագրության ժանրը անցել է պատմական զարգացման ուրույն ուղի՝ տարանջատվելով պատմագրությունից: Կ. Դանիելյանը իրավացիորեն նկատում է, որ այս ժանրը արդեն 19-րդ դարում տալիս է իր դասական մոտիվները<sup>4</sup>:

Մեր գրականության մեջ երևան եկած հուշագրության տարբեր տեսակներից, ամենապարզը օրագիրն է, որի առաջին մոտիվն էս. Աբովյանի «Դորպատյան օրագրերն» է: Այստեղ անձնական կյանքի փաստերի գրանցումը, մարդկանց հետ հանդիպումների մասին պատմությունները դառնում են գեղարվեստական գործ, քանի որ հեղինակը, օժտված լինելով գեղարվեստական ձիրքով, կարողանում է այդ բոլորին հաղորդել հուզականություն, հոգեկան դրամատիզմ և ռոմանտիկ պաթոս: Հետագայում Ղ. Աղայանը («Իմ կյանքի գլխավոր դեպքերը»), Պ. Պռոշյանը («Հուշիկներ»), Շիրվանզադեն շարունակեցին հայ մեմուարային գրականության ուղին՝ իրենց հուշագրական երկերում տալով նաև ժամանակի հայկական հանրային ու գրական կյանքի ամբողջական պատկերը: Ավելի ուշ Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ս. Ջորյանը իրենց հուշերում ընդլայնեցին ժանրի սահմանները՝ հանդես գալով և՛ իբրև ականատես-վկա, և՛ նուրբ վերլուծաբան, և՛ կողմնակի «աչք», և՛ գրող-արվեստագետ:

Ասվածից կարելի է հանգել այն համոզման, որ, բոլոր դեպքերում, իսկապես տարանջատվելով պատմագրությունից, հուշագրությունը պատմական զարգացման ողջ ընթացքում հենվել է փաստի վրա՝ պահպանելով նաև իր ինֆորմացիոն-ճանաչողական նշանակությունը: Նորից պիտի նկատենք, որ անցած դեպքերին ու դեմքերին վերաբերող մանրամասների վերարտադրումը հուշագրության հիմնական գործառույթն է, քանի որ այս դեպքում հեղինակի «երևակայությունը» եսկան դեր չի կատարում. «Վերստեղծված կերպարներում և հարաբերություններում եթե նույնիսկ հանդես է գալիս երևակայությունը, ապա այն չի կազմում հուշագրության որոշիչ գիծը: Տիպականը սերտորեն կապվում է ստույգի հետ»<sup>5</sup>: Եվ, չնայած սրան, քանի որ հուշագրության մեջ պատումը տարվում է հեղինակի անունից, և սյուժետային զարգացումը պայմանավորված է ոչ թե գեղարվեստական պայմանականությունների տրամաբանությամբ, այլ ինքնակենսագրական, ժամանակագրական փաստերի հաջորդականությամբ, ապա հուշագրությունների բովանդակային և իմաստային հագեցվածությունը պայմանավորված է հիմնականում հեղինակի անձով, գեղարվեստական պատկեր ստեղծելու կարողությամբ, ինչպես նաև նշանակալի փաստ ներկայացնելու հանգամանքով: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ներկայացվող, վերարտադրվող իրադարձությունների, պատկերների վրա անխուսափելիորեն դրվում է հեղինակի անհատականության կնիքը՝ առանձին դեպքերում դրանց հաղորդելով նաև սուբյեկտիվություն: Ստացվում է, որ հուշագրությունը գրականության համար արժեքավոր է դառնում միայն այն դեպքում, երբ հեղինակը, գրողը նուրբ զգացողությամբ ընտրում են այն մանրամասները, որոնք հասարակական լայն լսարանի համար

<sup>4</sup> Տե՛ս Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Եր., 1961:

<sup>5</sup> Հ. Սարգունի, նշվ. աշխ., էջ 493:

կարևորություն են ներկայացնում, անգամ եթե դրանք ներկայացվում են անձնական տպավորությունների, ապրումների հիման վրա:

Հուշագրության ժանրային առանձնահատկություններից է և այն, որ այլ ժանրի երկերի նման այստեղ ևս հեղինակը կարող է իր ուշադրության կենտրոնում պահել (հետևաբար և՛ ներկայացնել) հենց այն խնդիրները և ծրագրերը, որոնց լուծմամբ ինքը շահագրգռված է: Այս դեպքում հասկանալիորեն նեղացվում է ժանրի շրջանակը՝ նրան տալով ծրագրային մանիֆեստի, հրապարակախոսական ելույթի արժեք:

Հրապարակախոս Գրիգոր Արծրունու հուշագրությունը, որը զգալի տեղ է զբաղեցնում նրա գեղարվեստական ժառանգության մեջ, կրում է հեղինակի ծրագրերի անմիջական կնիքը: Նրա հուշագրության մեջ ոչ միայն նկատելի է ընթերցողին կարևոր ու օգտակար տեղեկություններ հաղորդելու ձգտումը, այլև հրապարակախոսի հետևողական քաղաքականությունը՝ օրախնդիր հարցեր առաջ քաշելու միտումը: «Մշակի» էջերում բարձրաձայնած ամեն մի խնդրի վերաբերյալ Արծրունին աշխատում է օրինակներ բերել օտարներից՝ այդ կերպ ներկայացնելով նաև խնդրի իր համար ցանկալի լուծումը:

Բավականին պատկառելի է Արծրունու հուշագրական ժառանգությունը՝ «Մի տարի Շվեյցարիայում» (1886), «Փարիզ» (1889), «Տպավորություններ» (1889), «Վեներցիա» (1890), «Երևանյան նահանգում» (1890): Այս երկերի մեջ և՛ ծավալով, և՛ առաջ քաշած խնդիրների բազմազանությամբ առանձնանում է «Մի տարի Շվեյցարիայում» հուշագրությունը, որը «Մշակում» լույս տեսավ 1886 թ. հունվարի 5-ից մինչև դեկտեմբերի 23-ը (հ. 2-ից հ. 145):

Արծրունին Շվեյցարիայում մեկ տարի անցկացրել է 1884-85 թվականներին, երբ ֆինանսական խնդիրների պատճառով (Արծրունու եղբայրների պարտքը) թիֆլիսում վաճառվում են Արծրունու եղբայրներին պատկանող պապենական շինություններն ու հողերը: Ապարդյուն են անցնում նաև Հ. Առաքելյանի ու Աբել Ապրեսյանցի՝ հայ հասարակությունից Արծրունու համար օժանդակություն ստանալու (աճուրդի դրված շինությունները հետ վերցնելու) ջանքերը: Ֆինանսական խնդիրները ազդում են նաև «Մշակի» հրատարակության վրա. 1884 թ. մարտի 7-ից թերթը լույս է տեսնում միայն շաբաթը երկու անգամ, իսկ հուլիսի 11-ին Արծրունին «Իմ բացատրությունս» առաջնորդողում ներկայացնում է իր նյութական վիճակը և երկու ամսով դադարեցնում թերթի հրատարակությունը: Ինչպես Արծրունու կենսագիր Լեոն է նշել, նա բազում հոգսերի ու մտածումներով մեջ քայքայել էր առողջությունը և Շվեյցարիա էր մեկնել հանգստանալու նպատակով. ««Մշակը» նա տվեց Րաֆֆիին, Գաբրիել Միրզոյանին և Ներսես Աբելյանին այն պայմանով, որ տարեկան 1000 ռուբլի ստանար: Այդ գումարով էլ նա հույս ուներ ապրել Շվեյցարիայում»<sup>6</sup>: Կյանքի հենց այս շրջանն է ընկած քննվող հուշագրության հիմքում:

Գր. Արծրունին Շվեյցարիայում եղել էր նաև ուսանողական տարիներին՝ 1884 թ. մոտ 20 տարի առաջ, և լրացուցիչ հնարավորություն է ստանում փոփոխությունները նկատելու և արձանագրելու: Պատմական որևէ հրադարձություն չկա այս երկում, սակայն այն հետաքրքիր է առաջին հեր-

<sup>6</sup> Լեոն, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1987, էջ 667:

թին նրանով, որ Արծրունին շարունակում է ընթերցողին ու լայն հասարակայնությանը առաջարկել խնդիրների լուծման իր բանալիները՝ այս անգամ դա անելով տարաբնույթ համեմատությունների ու բնորոշ օրինակների միջոցով:

Նախ՝ Արծրունին, հավատարիմ մնալով հուշագրության ավանդական գրելաձևին, ընթերցողին պարզաբանում է, որ ընդամենը ցանկություն ունի հաղորդելու իր տպավորությունները՝ բնավ նպատակ չունենալով գիտական, ծրագրային ինչ-որ նյութ մատուցելու: Չնայած սրան՝ ստիպված ենք կրկնել, որ հրապարակախոսը անուղղակիորեն ամեն ինչ անցկացնում է իր ծրագրային մանրադիտակով. «Շվեյցարիայի մասին իմ հոդվածների շարքում ես դիտավորություն չունեմ մի ուսումնական հետազոտություն կամ զեկուցում ներկայացնել, այլ կաշխատեմ հաղորդել հայ ընթերցողիս ճանապարհորդի, տուրիստի թեթև, միմյանց հետ գուցե սերտ կապ չունեցող նկատողություններ, կաշխատեմ հաղորդել իմ տպավորությունները, իմ դիտողությունները, իմ տեսածն ու լսածը» («Մշակ», 1886, հ. 2: Այս հուշագրությունից մյուս մեջբերումների դեպքում կնշվի միայն լրագրի համարը):

Արծրունին բարի նախանձով արձանագրում է 20 տարի առաջ իր տեսածի և ներկայի դրական տեղաշարժերը, որոնք, նրա համոզմամբ, նախ և առաջ արդյունք են քաղաքակիրթ մարդու նպատակասլաց աշխատանքի: Արծրունին խոսում է Շվեյցարիայի բազմազգ բնակչության, այնտեղ ուսանող երիտասարդների ու նրանց դրսևորած վարքագծի մասին: Նա հատկապես ոգևորված է խոսում Շվեյցարիայի տարրական, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների մասին՝ իրավացիորեն շեշտելով պետական ճիշտ ու անհրաժեշտ քաղաքականությունն այդ ուղղությամբ: «Մշակի» էջերում Արծրունին բազմիցս խոսել էր դպրոցների ու համալսարանների մասին, և սա դառնում է լրացուցիչ խթան՝ ներկայացնելու նաև իրեն հոգեհարազատ դպրոցի տեսակները:

Ավելացնենք, որ Արծրունին այնքան է հմայված շվեյցարացիների ազնվությամբ, նրանց բարձր գիտակցությամբ, որ ընկնում է մեկ այլ ծայրահեղության մեջ՝ նրանց բնավորությունը վերագրելով նաև իրենց ընտանի կենդանիներին. «Մեր երկրի վայրենի հովիվների շները, ապրելով վայրենի շրջանի մեջ, իրանք էլ վայրենի, չար ու կատաղի են: Շվեյցարիայում ոտքով շրջելով նույնիսկ հետ ընկած գյուղերում՝ ես չհանդիպեցի չար և անցնողների վրա հարձակվող շների» (հ. 25): Արծրունին լրիվ ընկնում է ծայրահեղության մեջ, երբ այդ շներին վերագրում է բարձր հասարակական գիտակցություն. «Դուք տեսնում եք մի ահագին շուն, որ մի գյուղական խրճիթի շենքի առջև հանգիստ պառկած է. նա չի հաչում, չի հարձակվում ձեզ վրա, նա երևի հասկանում է, որ ինչ անցնող էլ լինի, նա ազնիվ մարդ է, և որևէ չար դիտավորություններ չունի» (հ. 25):

Կնոջ աշխատանքի, նրա հասարակական դերի բարձրացման հարցը Արծրունուն հուզում էր նույնիսկ նախամշակյան շրջանից: Բազմաթիվ հոդվածներից ու առաջնորդողներից բացի՝ նա տպագրեց նաև «Երագ» պատկեր-պատմվածքը: Եվ ահա Շվեյցարիայում կնոջ բարձր դերը Արծրունուն կրկին հիշեցնում է իր ծրագրերի մասին, և նա սկսում է մեկ ամեկ թվարկել այն բոլոր պաշտոնները, որ զբաղեցնում են կանայք Շվեյցարիայում՝ հաջողությամբ կատարելով իրենց վերապահված առաքելութ-

յունը: Ըստ Արծրունու՝ տղամարդու հետ հավասար կատարելով բոլոր աշխատանքները՝ կինը, այնուամենայնիվ, կարողացել է նաև պահպանել իր ողջ կանացիությունը, հմայքն ու մայրական զգացմունքները: Սա Արծրունու համար լավ առիթ է՝ հանդգնելու, որ ոչ մի աշխատանք չի կարող կնոջը զրկել իր հմայքից, և պետք չէ նրան հեռու պահել հասարակական աշխատանքներից: Շվեյցարացի կնոջ օրինակով նա վստահ պնդում էր, որ կինը կարող է միաժամանակ և՛ լավ պաշտոնավարել, և՛ լինել լավ մայր ու սիրող կին: Շվեյցարացի կինը օժտված է նաև բարձր գիտակցությամբ, ինքնուրույն որոշում կայացնելու կարողությամբ: Արծրունու համար այս ամենը խիստ ընդունելի է, և նա դրվատանքով է խոսում նաև այդ երկրի իրավական ակտերի մասին, որոնք կնոջը լիակատար ազատության հնարավորություն են տալիս:

Արծրունին նկարագրում է նաև շվեյցարական եկեղեցին՝ հատկապես շեշտելով կրոնական հանդուրժողականությունը, որի վերաբերյալ Թիֆլիսում մի քանի անգամ հողավածներով հանդես էր եկել ինքը: Նա զարմանում է, որ այդ երկրում ամեն ոք ստորադասում է անձնականը ընդհանուրին, համայնականին՝ այդ ամենի սկիզբը տեսնելով նրանց երկրի քաղաքական նշանաբանի մեջ: Արծրունին այս մասին առավել երկար ու մանրամասն է խոսում իր երկրի ընթերցողին հավատացնելու համար, որ ամեն հարցում հարկավոր է առաջնորդվել ընդհանուր, համայնական շահով ու մտածողությամբ: Ծավալելով ասելիքը՝ հեղինակը որպես օրինակ մատնանշում է տարատեսակ հանգանակությունները, որոնց սիրահոժար մասնակցում է հասարակությունը: Մինչդեռ, ինչպես ինքն է բնորոշում, մեզ մոտ բարեգործական հանգանակության անուն լսելիս մարդիկ փախչում են, իսկ Շվեյցարիայում մարդիկ իրենք են նախաձեռնություն ցուցաբերում: Բնականաբար, Արծրունին պիտի մինչև «վերջ գնա» և ցույց տա նաև բարեգործության շնորհիվ արձանագրված խիստ դրական արդյունքները: Նա պատմում է «Ցյուրիխի որդեգրուհու» մասին (սոցիալապես անապահով որբ աղջիկը հասարակության հանգանակած միջոցներով ուսանելու է մեկնել արտասահման և դարձել աշխարհահռչակ երգչուհի) և անմիջապես հակադրում հայերի օրինակը, թե ինչու մենք երբեք ձեռք չենք մեկնում իրար, արտասահմանում իրար չենք սատարում: Մնում է ավելացնել, որ այս պատմությունը մեզ հիշեցնում է գրեթե նույն շրջանի հայ կյանքի պատկեր ներկայացնող Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի հերոսին, որը նույն հասարակության «մարդասիրական» ջանքերով ոչ միայն չի բարձրանում, այլև կորցնում է նախկինում ունեցածը:

1889-ի ամռանը Փարիզում գումարվում է գրողների միջազգային կոնգրեսը, որին մասնակցում է նաև Արծրունին՝ ներկայացնելով հայոց գրականության վիճակը: Փարիզյան տպավորությունները լույս են տեսնում նույն թվականին «Մշակի» էջերում (հ. 69-ից մինչև հ. 85 «Փարիզից» և հ. 94-ից մինչև հ. 99 «Տպավորություններ» վերնագրերով): Ինչպես իրավացիորեն նկատում է Լեոն, եվրոպական քաղաքակրթությանը ծանոթացող Արծրունին ամեն անգամ շտապում էր հաղորդել իր տպավորությունները՝ ընթերցողին ներկայացնելով եվրոպական կյանքն ու մշակույթը<sup>7</sup>:

Փարիզյան հուշերի մի մասը Արծրունին օգոստոսի 22-ից սկսում է ներկայացնել «Տպավորություններ» խորագրով՝ պարզաբանելով, որ

<sup>7</sup> Տե՛ս Լեոն, նշվ. աշխ.:

«Փարիզից» հուշագրության մեջ ինքը գերազանցապես անդրադարձել է ցուցահանդեսին և գրողների կոնգրեսին, իսկ այժմ, արդեն վերադարձած լինելով Փարիզից, ուզում է ներկայացնել, խոսել Փարիզի փողոցային կյանքի, ազգաբնակչության, զորքի, ֆրանսիացու բնավորության, քաղաքական երևույթների վերաբերյալ եղած հասարակական կարծիքի, ֆրանսիացի կանանց դրության, Փարիզի մամուլի մասին և այլն: Դատելով առաջարկվող ոլորտների ընտրությունից՝ Արծրունուն չի բավարարել նախօրոք տրված տեղեկությունը, և նա ավելի է բացում փակագծերը՝ այս անգամ ոլորտ առ ոլորտ ներկայացնելով իր տպավորությունները: Հասկանալի է, որ այս դեպքում նա լրացուցիչ փաստերով կարող է «ներգործել և հանդգնել» իր ընթերցողին, հատկապես որ ընտրել է կյանքի հենց այն ոլորտները, որոնց բարեփոխությամբ ինքը շահագրգռված էր, մյուս կողմից՝ ստացվում է Ֆրանսիայի ներքին կյանքի և ֆրանսիացու բնավորության մասին տեղեկատվական մի փաստաթուղթ:

Այս հուշագրության մեջ հատկապես ուշագրավ է Փարիզի հայ գաղթականությանը նվիրված հատվածը, ուր Արծրունին առանց թաքցնելու նշում է, որ հայկական մեծաթիվ համայնքի մեջ գրեթե ոչ մի կապ ու համերաշխություն չկա: Նա մասնավորապես շեշտում է սոցիալական տարբերությունը՝ տալով նաև հայտնի հայերի անուններ. «Իշխան Լուսինյան կամ Նուբար Փաշան առանձնացած են ապրում և չեն ընդունում իրենց մոտ ոչ հայ վաճառականներին, ոչ էլ հայ ուսանողներին» (1889, հ. 95): Եթե, այնուամենայնիվ, Լուսինյան-Գալֆայանի մասին Արծրունին ընդգծված հակակրանքով չի խոսում, ապա նույնը չի կարելի ասել Նուբար Փաշայի մասին, որին համարում է «թուրք պաշտոնյա»: Նման վերաբերմունքի պատճառն այն է, որ Նուբար Փաշային համարում է հայ մտավորականությանը սիրալիք չընդունող մարդ՝ շեշտելով հատկապես այն, որ վերջինս սիրում է հայերին քարոզներ կարդալ՝ «Թուրքիայի վրա չհարձակվել, որովհետև հայերը շատ երջանիկ են Թուրքիայում»: Սա արդեն հասկանալի է դարձնում նման վերաբերմունքի իրական դրդապատճառը, քանի որ դեռևս Արծրունու հրապարակախոսության մեջ նկատելի է նրա անբարյացակամ վերաբերմունքը այն հայ գործիչների հանդեպ, ովքեր նման կրավորական կեցվածք են ընդունում՝ պայքարի չմղելով արևմտահայությանը:

Արժանահիշատակ են նաև Արծրունու մեկնաբանությունները ֆրանսիական մամուլի վերաբերյալ: Նա միանգամայն իրավացի է, երբ մամուլի վրա դնում է ոչ միայն տեղեկատվական, այլև դաստիարակչական գործառույթ: Նույն չափանիշներով է նա մոտենում նաև Ֆրանսիայում հասարակական կարծիքի ուսումնասիրմանը: Անմիջապես երևում է Արծրունու քննադատական ոգին, երբ նա հավանություն է տալիս ֆրանսիացի այն մտածողների տեսակետներին, ովքեր անխնա քննադատում են իրենց հասարակության մեջ հանդիպող թերությունները: Նա ընդգծված համակրանքով մեջբերում է ֆրանսիացի այդ մարդկանց կարծիքները և կատարում իր համար ցանկալի ընդհանրացումը («Այդ տեսակ խիստ քննադատական, ինքնաքննող ուղղության են հասել այժմ ֆրանսիական ամենանշանավոր մտածողները» [1889, հ. 98]), որը ուղղակի արձագանքն է նաև այն մտքերի, որ ինքը հայտնում էր «Մշակի» ուղղության վերաբերյալ՝ «Խստությամբ քննադատել հայի պակասությունները, անխնա մտրակել և անողորմ կերպով մերկացնել այդ պակասությունները» (1890, հ. 3): Արծրունին

ամփոփում է Փարիզից ու Ֆրանսիական կյանքից ստացած իր տպավորությունները՝ կարողանալով ոչ միայն հաղորդել իր տեսածն ու լսածը, այլև ընթերցողի համար տարբերակել ու գնահատել իր պատկերացրած օգտակարն ու անընդունելին:

1890-ին «Մշակի» 49 և 50 համարներում լույս է տեսնում Արծրունու «Վենեցիա» հուշագրությունը՝ թվագրված՝ 1870: Սա նշանակում է, որ Արծրունին Եվրոպայում գտնված տարիներին եղել էր նաև Վենետիկում, որտեղից թղթակցում էր «Հայկական աշխարհին»: Նա հուշագրության մեջ էլ նշում է, որ մեկնել էր հիմնականում Մխիթարյան միաբանների մոտ հայերեն պարապելու նպատակով և մի քանի ամիս անցկացրել է այնտեղ: Կյանքի այդ մի քանի ամիսների տպավորություններն ընկած են այս հուշագրության հիմքում:

Մինչև 1890 թ. Արծրունին «Մշակում» մեկ անգամ արդեն անդրադարձել էր Մխիթարյան միաբանությանը (անվանում է Եվրոպայում «հայկական օազիս»), որը, սակայն, ըստ նրա, ճիշտ չի կատարում իր առաքելությունը, չի կարողանում օղակել արտասահմանի և տեղաբնակ հայությանը: Այստեղ էլ առանց թաքցնելու նա հայտնում է իր տեսակետը. «Վիեննայի Մխիթարյաններին ես չհավանեցի: Նրանք սարսափելի նախապաշարված, հնապաշտ և տգետ մարդիկ երևեցան ինձ և բոլորովին հիշեցրին ինձ մեր տգետ հոգևորականներին» (1890, հ. 49): Արծրունին քննադատում է միաբանների պահպանողականությունը, միջնադարյան մտածելակերպը («միջնադարյան ուրվականներ»), բայց շարունակում է հայերենի դասեր առնել նրանցից մինչև ձմեռվա վերջը, երբ հիվանդանում է և տեղափոխվում Վենետիկ: Այստեղ արդեն նա մանրամասն նկարագրում է Սուրբ Ղազարի վանքը, և ակնհայտ է, որ լուրջ տարբերակում է դնում Վիեննայի և Վենետիկի կաթոլիկ հայրերի միջև: Ի տարբերություն Վիեննայի՝ իր բնութագրած «տգետ» մարդկանց՝ այստեղ նրա ներկայացրած հայ հոգևորականները օժտված են «լուսավոր, առաջադեմ» հայացքներով, և Արծրունին անմիջապես նրանց հակադրում է Վիեննայի միաբաններին. «Խաղաղություն, տոկուն աշխատանք, անձնվեր սեր դեպի հայրենիքի հիշատակները և միևնույն ժամանակ եվրոպական կիրթ վարմունքն ու լայն ժամանակակից հայացքներ ամեն հարցերի վրա, – ահա Վենեցիայի սուրբ հայրերի հատկանիշը» (1890, հ. 49): Չնայած սրան՝ Արծրունին հիշեցնում է, որ դեռևս նախամշակյան շրջանում ինքը «Հայկական աշխարհում» անդրադարձել է նույն սուրբ հայրերի թերություններին («Մեծ Մխիթարի մահի տարեդարձը Սուրբ Ղազարի վանքում» («Հայկ. աշխ.», 1870, հ. 5 - 6)՝ վերահաստատելով, որ նրանց թերությունը շարունակում է մնալ կղզում գործող վանական դպրոցը, որը դեռ այն ժամանակ էր ինքը քննադատել: Արծրունին կրկին խոսում է դպրոցում տիրող սխալաստիկական մթնոլորտի մասին՝ չմոռանալով նաև լեզվի խնդիրը. «Ներկա գտնվելով դպրոցի տարեկան հանդեսին՝ համոզվեցա, թե դպրոցում տիրում է մեռած գրաբարականությունն ու հնացած սխալաստիկական մեռցնող ոգին...» (1890, հ. 49): Սակայն նույնիսկ այդ դեպքում Արծրունին իրավացիորեն անուրանալի է համարում նրանց ծառայությունը հայ գրականությանն ու արվեստին: Նա առանձին ջերմությամբ է խոսում հատկապես Ղևոնդ Ալիշանի մասին և դպրոցի (Ռաֆայելյան) բոլոր հաջողությունները կապում հենց նրա անձի հետ, քանի որ վերջինս լայնախոհ անհատ է. «Ալիշանի անխարդախ, հա-

մակրելի, անկեղծ բնավորությունը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձնվեր հանճարը կերպարանավորվում էր դպրոցի թե՛ ամբողջությամբ, և թե՛ նրա յուրաքանչյուր մանրամասնության մեջ» (1890, հ. 50): Համարձակ կարելի է պնդել, որ այս հուշագրական երկը հենց Ալիշանի համար է գրված, ավելի ստույգ՝ նրա անձը գնահատելու համար: Կարծում ենք, որ այս դեպքում Արծրունին իսկապես չի չափազանցում, երբ ամենաբեղմնավոր գրիչ ունեցող հային համարում է խելացի մանկավարժ, հայերին և ամբողջ մարդկությանը հայտնի ուսումնական մարդ, գրող և բանաստեղծ:

Իսկապես, այս հուշագրության մեջ Արծրունին ավելի շատ նպատակ է դնում ցույց տալու իսկական հայրենասեր հայերին, այն մարդկանց, ովքեր ապրելով Հայաստանից շատ հեռու, ամեն ինչ անում են պահպանելու հայկական ոգին: Անկախ իր դավանանքից՝ Ալիշանը Արծրունու համար դառնում է հայրենասիրության օրինակելի տիպար, որի դավանանքը երբեք չի կարող վտանգ ներկայացնել հայության համար:

1890 թ. նշվում էր Արծրունու գրական գործունեության քսանհինգամյակը, և նույն տարվա ամռան վերջում Արծրունին գնում է ճանապարհորդելու Երևանյան նահանգում: Տպավորությունները լույս են տեսնում «Մշակի» 102–117-րդ համարներում «Երևանյան նահանգում» վերնագրով: Ի տարբերություն վերը նշված հուշագրությունների, որոնք ներկայացնում էին օտար երկրներ ու ժողովուրդներ, այստեղ Արծրունին խոսում է սեփական երկրի ու ժողովրդի մասին: Չպետք է մոռանալ, որ Թիֆլիսում երկար տարիներ (մոտ 18 տարի) խմբագրելով հայկական թերթ, խոսելով հայի խնդիրներից, մտահոգված լինելով հայության ապագայով և ներկայացնելով նրա թշվառ վիճակը՝ Արծրունին ըստ էության չէր շփվել բուն ժողովրդի հետ, իր աչքով չէր տեսել իրական Հայաստանը: Պատահական չէ, որ այս կապակցությամբ Լեոն իրավացիորեն նկատում է, որ մինչ այդ արված բոլոր դատողությունների հիմքում ընկած էր ընդամենը Թիֆլիսի հայ գաղթականության քաղաքային կյանքը: Եվ իսկապես, այս հուշագրություն-տպավորությունները արդեն վերաբերում են 19-րդ դարավերջի մեր իրականությանը՝ արտացոլելով այն իր բնորոշ կողմերով:

Առաջին հիացական տպավորություններից հետո («Դիլիջանի ձոր, Սևանի ծով, Մասիս») Արծրունին անմիջապես տեսնում է իր պատկերացրածի և իրականի խոր հակասությունը: Մուրացանի «Առաքյալը» վիպակի հերոս Կամսարյանի նման նա էլ նկատում է հայկական և մալականների գյուղերի տարբերությունները, որն էլ Արծրունուն հիմք է տալիս քննադատելու. «Դարերի ընթացքում հայը ոչինչ չմոռացավ և ոչինչ չսովորեց. հայը, այո՛, վերին աստիճանի աշխատասեր է, բայց նրա աշխատասիրությունը մեղվի կամ մրջյունի աշխատասիրություն է, – անշարժ, զուրկ առաջադիմական, վերանորոգիչ ոգուց...» (1890, հ. 102): Արծրունին հայ գյուղացուն համարում է «անշարժ ավանդության ստրուկը», որովհետև վերջինս երբեք չի շեղվի իր պապերի ավանդություններից ու սովորություններից, իսկ դրանք, ինչպես արդեն նկատել ենք, նա համարում էր կյանքի առաջադիմությունը խոչընդոտող գլխավոր պատճառները: Հասկանալի է դառնում այս դեպքում նրա անզուսպ վրդովմունքը, երբ իր աչքով տեսնում է տարիներ շարունակ իր քննադատած երևույթները:



Յետաքրքիր է հատկապես հուշագրության այն հատվածը, որում Արծրունին գնահատում է Երևանը՝ Թիֆլիսի փոխարեն տեսնելով չսալահատակված, անկարագրելի կեղտով ծածկված փողոցներով մի քաղաք, որտեղ նա դրականորեն առանձնացնում է միայն Աստաֆյան փողոցը (Աստաֆեյվյան): Նրան զարմացնում է նաև Էջմիածինը, որը, ըստ նրա, ի վիճակի է ամբողջ հայությանը ապահովելու «ժամանակակից պահանջն ընթանող ժողովրդական քարոզիչներով և ուսուցիչներով»: Սա ևս Արծրունու ծրագրի մի մասն էր կազմում, քանի որ «Մշակի» էջերում նա պահանջում էր հայ եկեղեցուց կրթված, ուսյալ հոգևորականների ուղարկել հայկական գյուղերը: Ինչքան էլ Արծրունին քննադատում է հայերին, միևնույնն է, երբ համեմատության խնդիր է առաջանում, հայերին իրապես մրցակից որևէ ազգի չի տեսնում՝ համարելով Անդրկովկասի ազգաբնակչության թվում միակ կուլտուրական, ընդունակ, դեպի համամարդկային քաղաքակրթական կյանքը հակված ազգը: Նա համոզված է, որ քաղաքակրթության դեմ պայքարելն անհնար է, և թուրքերն ու քրդերը չեն կարող դիմանալ այդ մրցավազքին. «Քաղաքակրթությունն անողորմ մի ուժ է. նա, դիմելով մարդկային հասարակությանն, ասում է. «կամ ընդունիր առաջադիմության արգասիքները, կամ մեռիր»: Այդպես էլ պատահում է թուրքերի, բայց մանավանդ քրդերի հետ, երբ նրանք շփվում են քաղաքակրթության հետ» (1890, հ. 112): Այս միտքը ուղղակիորեն հիշեցնում է «Մշակի» գաղափարական սյուններից մեկի՝ Րաֆֆու հայտնի միտքը («Խենթ» վեպում Վարդանի երազը): Բայց եթե ռոմանտիկ Րաֆֆին գոնե երկու հարյուր տարի հետո էր տեսնում ցանկալի լուծումը (քրդերի ձուլումը), ապանրա գաղափարակից Արծրունին այդքան երկար սպասելու միտք չուներ: Ավելի առաջ է գնում նա, երբ քաղաքակրթությանը չդիմացած քրդերին («չդիմանալով հայերի գերազանց ուժին») տեսնում է միայն հայերի տներում ծառաների և հովիվների դերով: Չնայած սրան՝ նա անհրաժեշտ է համարում ընթերցողին մանրամասներ հաղորդել քրդերի միստուկացի, կենցաղի վերաբերյալ:

Ամփոփելով Արծրունու հուշագրական ժառանգության քննությունը՝ պետք է նկատել, որ հեղինակը բոլոր դեպքերում չի մնում կողքից դիտողի և արձանագրողի դերում, նա անպայման արտահայտում է նաև իր զգացական վերաբերմունքը, նույնիսկ կետ առ կետ լուծումներ առաջարկում: Այս իմաստով թերևս նրա հուշագրական երկերը մի փոքր շեղվում են ժանրի դասական նմուշներից, սակայն լիովին տեղավորվում են Արծրունու «դաստիարակչական» ընթանումներում: Նրա հուշագրության մեջ (հատկապես «Մի տարի Շվեյցարիայում», «Փարիզից», «Վենեցիա») ոչ միայն նկատելի են ընթերցողին կարևոր ու օգտակար տեղեկություններ հաղորդելու ձգտումը, այլև հրապարակախոսի հետևողական քաղաքականությունը՝ առաջադրել օրախնդիր հարցեր: Արծրունին նույնիսկ հուշագրական երկերում մնում է օգտապաշտ գրականության ջատագով՝ ամեն կերպ ցանկանալով առաջ քաշել հրատապ լուծում պահանջող հարցեր:

Քննված երկերում քիչ չեն նաև որևէ նշանավոր իրադարձության, եվրոպական մշակույթի, այս կամ այն ժողովրդի կյանքի ու կենցաղի գեղարվեստական նկարագրությունները, որոնք նրա հուշագրություններին ավելի մեծ ճանաչողական ու գեղարվեստական արժեք և նշանակություն են հաղորդում:

**АРШАЛУЙС ГАЛСТЯН – Мемуарное наследие Григора Арцруни.** – В статье рассматриваются мемуарные произведения Г. Арцруни, примечательные тем, что их автор, отвергая роль стороннего наблюдателя, непременно выражает свое эмоциональное отношение к изображаемым событиям и даже предлагает свои решения различных вопросов. В этом смысле они отклоняются от классических образцов жанра, однако полностью вписываются в “воспитательную” методу Арцруни. В его мемуарах (в особенности “Год в Швейцарии”, “Из Парижа”, “Венеция”) даёт о себе знать не только стремление просветителя сообщить читателю интересные и важные сведения, но и привычка публициста привлечь внимание к насущным проблемам. Арцруни и здесь остается сторонником “полезной литературы” и выдвигает на первый план актуальные, требующие решения задачи. При этом его сочинения мемуарного характера богаты сугубо художественными описаниями, а также рассказами о культуре и быте того или иного народа; всё это придаёт его воспоминаниям как эстетическую, так и познавательную ценность.

**ARSHALUYS GALSTYAN – *Grigor Artsruni's heritage of memoirs.*** – The present paper considers memoirs in Grigor Artsruni's literary heritage. It is noted that in all cases, the author does not assume the position of a bystander, but always expresses his emotional attitude and proposes diverse solutions. In this respect, his noteworthy works might differ from the classical samples of the genre, but completely fit in the author's “educational” awareness. His memoirs, (especially “A year in Switzerland”, “From Paris”, “Venice”) not only signal his desire to provide the reader with relevant and useful information, but also indicate his policy of a publicist to consider current actual issues. Hence, even in his memoirs Artsruni retains his position of making literature useful, by seeking to put forward actual problems requiring solutions.

The considered works boast vivid descriptions of some outstanding events, as well as share information about the European culture and lifestyle, which gives more artistic and informational value to his memoirs.